

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/1**

**6 հոկտեմբերի 2015 թ.**

Քննարկվեց «Սիրարփի ԱՀ» ՍՊԸ 07.09.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ ի թիվ 680/09 որոշման դեմ:

#### **«Սիրարփի ԱՀ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի 21.08.2015 թ-ի թիվ 5013000 հանձնարարագրի «Սիրարփի ԱՀ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվում է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

Ընկերությունը ստեղծված օրվանից մինչ օրս մշտապես բարեխղճորեն կատարում է բյուջեի նկատմամբ իր պարտավորությունները:

07.09.2015 թ-ին ընկերությունը ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի թիվ 680/09 որոշումը, որի հետ համաձայն չէ:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է չեղյալ համարել նշված որոշումը և հարցին անդրադառնալ ստուգումների ավարտից հետո:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Սիրարփի ԱՀ» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 26.08.2015 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 4.892.855 դրամ, որից 4.887.555 դրամը ԱԱՀ-ի գծով է (4.293.517 դրամ ապառք, 594.038 դրամ տույժ), իսկ 5300 դրամը եկամտային հարկի գծով (5253 դրամ ապառք, 47 դրամ տույժ):

ԱԱՀ-ի գծով պարտավորությունն առաջացել է 2015 թ-ի 2-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլված ԱԱՀ-ի գումարներից և դրանք սահմանված ժամկետում բյուջե չվճարելու հետևանքով հաշվարկված տույժերից:

Եկամտային հարկի գծով պարտավորությունն առաջացել է 2015 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի ամսական հաշվարկում արտացոլված եկամտային հարկի գումարներից և դրանք սահմանված ժամկետում բյուջե չվճարելու հետևանքով հաշվարկված տույժերից:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88 րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության

պետի կողմից 31.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 680/09 որոշումը «Սիրարփի ԱՀ» ՍՊԸ-ից 4.892.855 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

«Սիրարփի ԱՀ» ՍՊԸ գանգատում ընդամենը նշված է, որ ընկերությունը համաձայն չէ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի թիվ 680/09 որոշման հետ՝ առանց որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունների իրավաչափության վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու:

Քննարկվող դեպքում, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի թիվ 680/09 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններն առաջացել են ընկերության կողմից ներկայացված հաշվարկներով և սույն գործում առկա չեն հիմնավոր ապացույցներ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններն ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի թիվ 680/09 որոշումը հիմնավոր է, կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ենթակա է կատարման:

Ինչ վերաբերվում է գանգատով բերված միջնորդությանը՝ հարցին ընկերությունում իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումն ավարտվելուց հետո անդրադառնալու վերաբերյալ, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ համապատասխան հիմքեր, որոնք թույլ կտային կասեցնել ընկերության գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը, առկա չեն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի թիվ 680/09 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**